

ՎՃԱՐՄԱՆ ՊՐՈԳՐԱԿՐԱԿՆԵՐ

| | |
|------------------|-------|
| Պուշկարիոյ համար | 13 Ֆր |
| Տարեկան | 6 " |
| Վեցամսեայ | 15 " |
| Տարեկան | 8 " |

| | |
|------------------|----------|
| Անկերիկայի համար | 3 ռուբլ. |
| Տարեկան | 1.50 " |

Պատկերակ սուրճ սուս
 զին Երևանի համար 10 ս.
 Իսկ վերջին Երևանի հա-
 մար 20 սանթիմ. Ե. Երե-
 վանի անկերիկայի համար
 20 Օ/Օ զեղյ կրչ

Վաճառքի համար մ'ոք 10 սանթիմ



ՇԱՐՋՈՒՄ ԱՅՈՒՆԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ԶՐ ՏՄԲԱԿՈՒԻ ՉՈՐԻՔԵՆՈՒԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նախկին և նորից իր
 հիմնադրուածն և հաս-
 ցիկն

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjourn“
 Varna (Bulgarie)

Արաստիակի համար
 մեքսի
 X 20 ՍԱՆԹԻՄ X
 Պուշկարիոյ համար
 մեքսի
 X 15 ՍԱՆԹԻՄ X

Գրութիւնք և յեկ տրութիւնք

ՇՈՐԻՔԵՆՈՒԹԻ Ի ԲՍՏՈՒՆՈՐԻ ԳՐՈՒՄԸ. ԲՍՏՆԵԳԻՆԸ ՊԷՏՐ Է ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐՋՈՒՄՆԵՐ

Ն. Յ. Պ-ն հետեւեալ հետազոտիչ է
 ստացել 4. Պոլսէն օգոստոս 25 թու-
 կանով

«Մուշի հիւպատոսներու հազար-
 զարու թիւները կը տեղեկացնեն թէ՛
 ամսին 13-ին Շէմիթէն գիւղի (Պիթ-
 իսէն Ծ ժամ հեռու) մտ. քառասուն
 հոգիէ բաղկացած հայկական խմբի մը
 և գիտութիւններէ ու ոստիկան-գինուոր-
 ներէ կազմուած ջոկատի մը միջեւ
 ընդհարում մը տեղի ունեցաւ, որու
 միջոցին վերջիններէն մէկ մարդ ըս-
 պանուեցաւ և վերջ վիրաւորուեցան:
 Հայկական խումբը ետ քաշուեցաւ:
 Ամսին 17-ին ուրիշ խումբ մը, Ձէ-
 խէր, Գիւհոր և ուրիշ գիւղեր անց-
 նելէ յետոյ մտաւ Պիթիսի մէջ, ուր
 և ընդհարում ունեցաւ զօրքերու հետ:
 Այս բարձր մահմետականներու և հա-
 յերու մէջ մեծ սարսափ առաջ բերաւ,
 և վերջապէս դադարեց թիւներ տեղի
 ունեցան հայերու դէմ: Վալիին, որ
 Մուշ կը գտնուէր, անյայտ Պիթ-
 իս է մեկնել:

Հայկական խմբերու գլխաւոր պետ
 Անդրանիկը դեռ Սասունի շրջանը կը
 թափառի: Վերջին ժամանակներս
 հայկական շոր խմբի հովանակն սա-
 ման անցեր են, և Խրապան մեծ շար-
 ժում մը կը պատրաստուի: Էրզրումի,
 Վանի և Պիթիսի հիւպատոսական
 տեղեկութիւնները կ'ազդարարեն զին-
 ուորական մեծ պատրաստութիւններ:
 Այստեղի Անգլիական Ֆրանսական
 և Ռուսական դեսպանները հայկական
 շարժումներու առաջ ինքզինքնին
 շատ ցուրտ կը պահեն, որովհետեւ
 պարզ կը տեսնուի թէ՛ շարժումը յի-
 դափոխական ծնունդ է և ատոր հա-
 մար ալ Բ. Դրանը պէտք է ձգել զին-
 ուորական ուժով ապստամբութիւնը
 ճնշելու:

Ամենէն շատ հայկական շարժումնե-
 րով կը հետաքրքրուի Ռուսաստանը,
 իր սահմանակցութեան պատճառով,
 և ուսումնական կառավարութիւնը կրկ-
 նակի անգամներ Բ. Դրան հետ միա-
 ցած զանգառ միջոցներ է մշակած և
 ձեռք առած սահման անցները որ
 գիւղիւ համար: Այնտեղի թէ՛ գին-
 ուորական և թէ՛ քաղաքացիական
 պաշտօնները՝ հակառակ բազմաթիւ
 նպաստաւոր պայմաններուն քան Մա-
 կեդոնիոյ մէջ, և հակառակ Գուրա-
 բու իրենց մատուցած մշտական օգ-
 նութիւնը հայերու դէմ խմբերու
 դոյնութիւնը հիմքէն ջնջելու, անկա-
 րող են խմբերու առաջն առնել, և
 զօրագնքերը խմբերու դէմ կ'ուսու-
 համար անպէտք են:

ՀԱՅԵՐՈՒ ԴԵՍ

«Նարժումի անցեալ համարի
 մէջ «Վեչերնա պոչտա»-յէն ար-
 տատպած Կ. Պոլսի նամակի մտ.
 հասցոտ աղբրը, անշուշտ յուսա-
 հատեցողցից ախրութեամբ մը
 համակցելին ընթերցողներու
 սիրան ու հոգին: Այդ նամակը
 աւելորդ անգամուան մը համար
 կուզայ հաստատելու թէ՛ հայկա-
 կան սարսափներուն մէջ քրիս-
 տոնեայ մեծ պետութեան մը մա-
 տը խառն էր: Իսկ ներկայ յիսաշի
 և կիսալուսնի երգուեալ հայա-
 ջիւնը դաշնագրութեան մասին,
 ինքք, «Վեչերնա պոչտա»-յի յար-
 գելի տէր և խմբագիրը Վառնա-
 յէն անցնելով, իր մէկ մասնա-
 ւոր խօսակցութեան միջոցին
 յայտնեց թէ՛ այդ դաշնագրու-
 թիւնը «ճիշտ է», և թէ իրենք
 զգրաւոր փաստեր ունին այդ
 բանին խորապէս հաւատալու: Եւ
 եթէ շատ պզտիկ մխիթարական
 կէտ մը կայ, այդ այն է, որ
 պուլկար լրագրագետը յայտա-
 րարէր է նաեւ ինքնաբերաբար
 թէ՛ ինքը գրտուած այս համակ-
 րութեանէն, որ կը տածէ դէպի
 հայերը, հայաստան քաղաքա-
 կանութիւն մը պիտի սկսի իր
 թերթին մէջ: «Աւելի լաւ է ուշ
 քան երբէք»: Պատասխանելով
 այն արգարասէր մարդուն, դառ-
 նանք հայաջիւնը դաշնագրու-
 թեանը:

Ռուսաստանի ձեռք առած այդ
 հայաստան անգութ միջոցները,
 անոր իբրեւ մոլորանդ խաչա-
 պաշտ պետութեան յիսաշի ստու-
 րացումի գաշիքը, իրենց մէջ
 պարզ կ'ըլլայով կ'արտացոլացնեն
 հայ պատագրութեան մտաւորտ
 իրակամութիւնը: Եւ այս մինք
 գիտնալու ենք: Մահամբռն և
 «անմիասն» ազգերու դէմ չէ որ
 բռնակալ պետութիւնները իրենց
 հարուածներ կուղղեն, իրենց
 ոճրագործական ծրագիրները կը
 կազմեն, և ամբողջովին կսկսին
 անոնցմով զբաղիլ, այլ այն ազ-
 գերու դէմ, որոնք ապրիլ կը

ձգտին, որոնք չլիցապահեցան
 չշաններ կուտան, որոնք վեր-
 ջապէս «միասնակար» կը նկատ-
 ուին:

Ռուսական քաղաքական շըր-
 ջաններու մէջ այլիւս կասկած չը
 կայ թէ՛ Մայրագոյն-Արեւելքի
 պարտութեան ամէն մէկ քայլի
 հետ ի միջի այլոց նաեւ հայա-
 զատագրութեան ճամբաներն են,
 որ կը բացուին: Եւ անգամ մը
 Հայաստանը ազատուած, կովկա-
 սահայերու նկատմամբ այլիւս ա-
 մէն ուսացման փորձ կամ միջոց
 չուրը պիտի ընկնին: Այդ գեռ
 բոլորը չէ, կովկասահայերը պաշտ-
 պանուած ու քաջաւերուած պա-
 զայ ազատ Հայաստանով, իրենց
 ազատական ու քաջաքակթական
 հոգեմեծքով, որոց համար այն-
 քան հիացողիչ փաստեր տուին
 անոնք վերջերս. գայթակղեցու-
 ցիչ տարր մը պիտի հանդիսա-
 նան արհեստական կերպով Մայր-
 Ռուսաստանին միացած կովկասի
 այլակրօն ու այլացեղ ազգերուն:
 Եւ եթէ գոյութիւն չունենայ ա-
 զատ Հայաստանը, հետեւաբար
 գոյութիւն չը պիտի ունենան և
 այն վայրերն ու կասկածները,
 որոնք կովկասը ազատել կ'պառ-
 նան Մայր-Ռուսաստանէն, Ռեւեն
 և ամէն ստորացում և բարբարո-
 սութիւն յանձն առած պէ՛տք է
 ջնջել հայութիւնը՝ ջնջելով ա-
 նոր հետ նաեւ վաղուան ազատ
 Հայաստանի անհանգստացնող հե-
 աանկարը:

Ահա իր խոշոր գծերուն մէջ
 ներկայացուած, ռուսական քա-
 ղաքագիտութեան տրամաբանու-
 թիւնը և տակտիկան: կովկասի
 վերաբերմամբ անոր ունեցած այդ
 ցաւալի մտահոգութիւնները թէև
 կարելի է ըսել թէ՛ անմիտ ե-
 րազներ են, սակայն ի՞նչ կարե-
 լի է ընել, երբ ռուս քաղաքա-
 ղէտները մի՛շտ այդ կերպ տրա-
 մաբանելու են վարժուած: կով-
 կասը, և առ հասարակ ռուսական
 միւս բոլոր հպատակ երկիրները,
 դժգոհութեան ամենափոքր նը-
 շանն անգամ չը պէտք է ցոյց
 տային, եթէ ռուսական օրէնքն

ու վարչութիւնը մարդկային,
 արդար և ազատ ըլլային: Հայ-
 կական առածը կը ըսէ՝ «ինչ որ
 կը ցանեն, նոյն ալ կը հնձեն»: Ռե-
 վեն երբէ՛ք տարօրինակ չէ,
 որ ռուս կառավարութեան և հը-
 պատակ ազգերու մէջ այսօր ան-
 մեծեղ լի առեւտրութեան վիճ
 մըն է բացուած: Եւ գեռ պէ՛տք
 կայ բսելու թէ՛ փոխառակ սուգի
 և տառապանքի մատնուած ամ,
 բոլոր ազգեր ընալին ընկու ծը-
 րագիրներ կազմելու, լաւ կընէ
 ռուս քաղաքականութիւնը, եթէ
 մեծ ու փոքր Պիեզվեներն ու Գա-
 լիցիները ջնջէ և Անոնք են, որ
 ուժով կազառեն կովկասը և ուրիշ
 երկիրները Մայր Ռուսաստանէն,
 անոնք են որ ռուսական պատիւը
 ծաղրի և անարգանքի մատնելով,
 ամբողջ Ռուսաստանի քաղաքումը
 կը պատրաստեն, Բայց ո՛չ, տ-
 նոնք հակառակը կը գործեն, ու-
 բովհետեւ այդպէս են վարժուած
 մինչեւ այսօր: Սակայն թող չը
 մոռացուի նոյնիսկ ռուսական ա-
 ռածը թէ՛ «մարդը կը խորհի,
 Աստուած կը կատարէ»: Կամ
 ինչպէս իր դաշնակից թուրքը
 կը ըսէ՝ «տանը հաշիւը չուկային
 մէջ չ'անցնիր», — Ինչպէս որ ա-
 մէն օր կ'ապացուցանեն Մայրա-
 գոյն Արեւելքի մասին անցած
 ռուսական հաշիւներն ու ծրա-
 պիրները:

ՃԱՌՈՒԱԿԱՆ ՄԵՌԵԼԱՏՕՆ ՄԸ

«Ստանտարտը» հետեւեալ ման
 րամասնութիւնները կը հաղորդէ
 կուրի մէջ ընկած ճարտական
 զինուորներու առթիւ կատար-
 ուած սպահանքէսի մը մասին:
 Թաղումը լմնցած էր, զօրագուն-
 դերը սպաններով ու զինուորա-
 կցորդներով, որոնք ձինտօ ա-
 ղանդին պատկանած քահանանե-
 րու հետ հանդիսատես էին՝ ետ
 կը գառնային լսելու երկրորդ
 զօրաբանակին պուտտայական
 քահանայի մը մեռելական ա-
 ղօթքը: Փէօնկֆանկչէօնկի մօտ
 լերան մը ստորտաին վրայ շար-

ժական տաճար մըն էր շինուած : Այս տաճարին կը մտնենար քահանան ամէն երեք քայլին խունկ ձգելով խնկամանի մը մէջ : զոր մէկը բռնած կընկերակցէր : Յետոյ կ'անաչ և ծիրանի թախիչ ներով փաթթուած թուղթ մը բացու և հետեւեալը կարդօց : — Ռուսաստանի մեզքերը պատուան և Աստուածները ցարդուցած են, և մեր պետին ստիպած կաիւ յայտարարել : Ատոր համար էր, որ մենք սուրբը մերկացուցինք : Չեր հոգիները բաւական զրկանքներ և անձնուրացումներ կրած են այն օրէն, երբ դուք հայրենիքը թողուցիք : Բայց այս փորձութիւններուն մէջ ձեր պարտականութեան գիտակցութիւնը փորձուեցու, և արժանացաք բոլորի հիացմունքին, և անոնց, որոնք սկանառես վրաները եղան ձեր զոհարումի : Կուս ամբողջութիւններու ետեւէն թշնամին ձեր առաջն ելաւ : Առանց փորձումի սակայն, դուք մարկուեցաք դէպի վտանգը և սուիմներով ճամբայ բանալով առաջացաք, մինչև որ Չուլիէնչէնկը տանուեցաւ... Այդ սեսակ հերոսական գործերը նախ և առաջ նորին կայսերական յիշատակութեան առաքինութիւններուն պէտք է վերագրել : Բայց ձեր ուժն ու անձնուրացութիւնը մեծ գերխաղացին : Եղբանակը ապահովելու համար : Գնտակները անկարող էնն ձեր ազնիւ յատկութիւնները ձեզմէ խելու : Երբ միտքս կանգրագառնայ մեծ

պատերազմի դաշտավայրի վրայ, մարմինս կը բոցավառուի, և դատողութիւնս կը տկարանայ : Բայց և այնպէս ան որ կայրի պէտք է մեռնի, և ան որ կը կը հանդիպի, պէտք է բաժնուի : Այս է կեանքի օրէնքը : Մահը ամէն մարդու տունէն իր աւարը կը տանի : Դուք սակայն այնպիսի անուն մը կը թողուք, որ ձեր ծնոցներուն փառքի պատկը կը կազմէ : Դուք եղար լաւ զուակներ և քաջ ազամարդիկ : Ամէն անոնք, որոնք ձեր հերոսական գործերու մասին պիտի կարգան, լեցուելու են քաղաքացիական պարտականութեան հզոր զգացումով մը : Ազդի ճակատագիրը ձեր ուսերուն վրայ կը ծանրանար : Դուք գիտցաք մեռնի : Դուք ձեր պարտքը կատարեցիք, իբրև ճշմարիտ քաղաքացիներ, և իբրև պարտաւանութեան հաւատարիմ որդիներ : Դուք ցոյց տուիք անձնուրացութիւն և անդրդուելի քաջագործութիւն, որոնք ճարտական նկարագրի գեղեցիկ գրծերուն կը պատկանին : Ձեր անունները ժամանակի յորձանքներու միջով պիտի հնչեն, քանի որ Եսայի թրբըրը գեղեցի յաւիտենականութիւն կը հոսին : Ձեր փառքը երբէք չը պէտք է մեռնի, ան յաւիտենական պիտի ըլլայ, ինչպէս սառույցը Փոճի : Համայնի գագաթին վրայ : Այս գիտակցութիւնը պիտի հաշտեցնէ ձեզ այն զոհարումին հետ, զոր դուք ձեր հայրենիքին համար ըրիք :

Մեր պատուական փրկութիւնը յաւան մէջ օրինուարութիւնը, ճշմարտութիւնը, մանկական սէրը և եղբայրութիւնը ինչպէս բոլոր աստուածահաճոյ գործերու արմատն է ցոյց տուած : Աշխարհային տեսակետով ձեր մահը ազնիւ էր, փրկութիւնը կայն տեսակետով հրաշալի : Ես կը կանչեմ Պուտտան, և այն ստուածները, որոնք երկրեւրանց ամպերու մէջ են բազմած, ինչպէս հաւա ստորերկրեայ Աստուածները, որպէս զի տալով ես կարողանամ ձեր հոգիներուն երկնային մանանայի նախնական ճաշակը տալու :
Ն. Ս. Պ.

ՍԱՍՈՒՆԻ ԿՈՒՆԵՐՈՒՆ ԱՌԻՔՈՎ

— 000 —
Թ.

Ապստիլ՝ Սասունցի կիներեն

Գործնական ապտակն է որ կիջնցնեն Սասունցի մեր արի քոյրերը իրենց ընդվզումի սքանչելի օրինակով — անտարբերելու, համակերպականներու, համբերութեան ջատագործներու և ասոց ամենուն ներկայացուցիչ վերակազմալ ազգապանծներու...
Հասկէ մը աւելի ծանր, շեկացած երկաթէ մը աւելի խանձող է ատապալը, հասկցողներու համար : ուժգին ապտակ մը՝ Սասունցիին համար ներկայիս մէջ կեղծ ու ծանրալից արցունք... Թափող բայց ասոր տարուան իրենց հակաեղափոխական կեանքովը սասունցիին փոքր փորոզ, անոր անարգ մահը ցոյց աւել վատերուն
Սասունցի կիներն է որ շի կրնար

համբերել տիրող դուր թեան, իր հայրենիքին դէմ լարուած թրջական դաւերուն, իր պատիին, իր հանգստին սպաննացող վտանգն, ու կուգայ լծողոր ի սասունցի սղաւարդուն...
Որքան վեճ, հիանալի ու կազդուրիչ պատկեր...
Սասունցի քոյրերուն սուած գործնական դասին և վերակազմալ ազգապանծներուն ցուցադրած խոհեմական-պայքալութիւններուն բազմատական կողմերը մէջտեղ դնելէ առաջ սակայն, ամփոփենք նախ 1900-1901 իրողութիւնները, պահելու համար սրտի մասին լնտնային և անյայտըրող ընդվզումի անխուսափելի և ինքնաբեր օրինակներուն յայտնական կարգը :
Անս, 190-1901 դէպքերն ալ :
Ա. — Պշարի Սայիլ աղային գործը Սասունի վրայ, շի գանձուած (7) տուրքերը գանձելու, պատուակին և տէր Գաբրիէլի ու քանի մը ազնուցիկ հայերու բանտարկութիւնը Սասունի մէջ, Սպաղանքի կոտորածը, որ յիշելիք անցած անգամ :
Գ. — Սերոր-Աղբիւրի կնքածայր Մակարի և 10-12 սասունցի կալիներու ինքնաբեր և անխուսափելի զիմարտութեան յայտնութիւնն ու քրդերու նահանջը :
Գ. — Կատապարտութեան գործերուն ներկայութիւնը Սասունի մէջ և հայերու ճակատաւոր ճակատ գաղ անոնց դէմ և առանց մէկզմէկ բաղխելու զօրքերուն մեկնումը :
Ասոնք 1900ի դէպքերն են :
Դ. — Սիւնցի ցեղապետ Քէօն-Սըլօի հետ կատապարտութեան գործերու մուտքը՝ Տալօրիկ և 100 սակի տարքի գանձումը և աշխրէթներու իր նուիրը Սասունի լեռներուն վրայ :
Ե. — Զօրանցներ շինելու համար շատոնց ի վեր փայտալուծ մրակիլը ի գործ դնելու համար 500-է աւելի կանոնաւոր զօրքերու հետ վարպետ

ՀԱՅ ՓՇՐԱՆՔՆԵՐ

— 000 —
Ա.
Պ Ե Տ Ր Ո Ս Ը

Հայութեան փշրանքները... ցըրուած, տարտղուած, հոս, հոն, մալ ու տխուր անկիւններուն մէջ անձանթ թուեալու, ազականուած միմուրտներուն սակ, շատեր կորսուած յուրտենականօրէն, ոճանք կորստի ահաւոր արահետներուն վերայէն անտարբեր դժբախտ յառաջացումը կուենան, առանց յետնայելու անգամ մը, հոն, ուրկէ կեանք առած են, ուրկէ իրենց նեխած, այլեւս փտած սրունքները առաջին քայլ սկսած են դէպի ճամբունը փճացումի... Հայ փշրանքները... ո՞վ պիտի նուիրական փնտտութի ձանձորյիլը յանձն առնէ զանոնք իրենց անհետացումի քառաներուն մէջ գտնալով դուրս, դուրս հանէ դէպի լոյս աշխարհ, ու քարոյ տայ անոնք դէպի հոն՝ ուր կեանք կոչուած առեղծուածը կարող է գոյութիւն ունենալ անոնց համար : Ո՞վ պիտի զգայ այն ահաւոր պահանջը, որ անոնց անհրեւութացումը պիտի թողու : Ո՞վ պիտի յիշատակու մը ունենալ մտաբերէ անոնց մտա

ցուած, փտած ու մեռած էութիւններուն : Ո՞վ պիտի Դեօզինէսի լապտերով հայ փշրանքները ժողովուրդ ելլայ, որոնք անձանթ, կորստի ճամբաներուն անկիւնները թափթեփած՝ ամէն րօպէ գիշտկեր թանջուններու անգութ կտուցներուն կեր ըլլալու դատապարտուած են : Ո՞վ պիտի չնչնցնէ փողը անդրաշխարհեան, որուն ձայնը կարող ըլլայ հասնիլ այն սարսափի որոտումներէն խլացողներուն, որոնք այլեւս չեն լսեր վտանգի ահաւոր գոռումները ու կը վազեն, կաճապարեն դէպի թուեալուր քիթը անոր՝ որ գիշերը պիտի ճգնէ, փշրէ, խեղդէ, Հայ փշրանքները... ախ, որքան բաղաժախե են ու որքան ցիրոցան. անձանթ ու անգութ օտարութեան գարշապարներուն տակ անոնք ամէն օր կը կոխտուին, ամէն ժամ կը փշրուին ու անձանթ թաղուին ոտքափակու վերջաւորութիւնը կուենան ցեխին ու փոշին նստ : Կործանիլ թանձրութեանը տակ անհետանալով : Ո՞վ պիտի որդայ անորց եղբերակական վերջաւորութիւնը : Անոնց վերին սարսափելի կտակին ո՞վ թարգման պիտի հանդիսանայ, ան կտակը՝ որը իրենց ճգնաժամային վերջին վայրկեանին իրենց շուրջի պարագութեանը, ամայութեանը մէջ գորս և պտթկացած իրենց անհոգի

վիրաւոր կողորդէն : Ահ հայ փշրանքները՝ որոնք փշուր, փշուր փշուրեցան միտքիքական քառաներու կանոնը, լափող խոռոչներուն մէջ : Ո՞վ պիտի կարողանայ անգամ մը երեւակայել ան անսահման տառապանքը, որը հարկադրուեցան ապրելու հայութեան նշխարները : այն ցաւերը՝ որ անձանթ մնացին աշխարհին ու մարդկութեան, այն տառապանքները՝ որոնք, աւաղ, անյայտ եղան, թաղուեցան տառապողի հետ, գերեզմանէն անդին ալ, մալ հողի խոնուութեան տակ ալ անբաժան մնալու հայութեան անբախտ մասունքներէն : Եւ վերջապէս ո՞վ պիտի կարողանայ ունկնդրել այն լուռ հատանքները որոնք գերեզմանի անհունութիւններէն վեր կը բարձրանան առանց մէկէն լսուելու, առանց հասկցուելու... ախ ան մեռած, կորսուած հայ փշրանքներուն ապրող ցաւի էն ահաւոր, էն քառանքի հատանքները որոնք անձանթ, անհասկանալի կը մնան աշխարհին ու մարդկութեան, ո՞վ պիտի վերջապէս լսէ անոնք, ո՞վ, ու պատմէ հարկութեան, որուն քար դարցած սիրտը փշրի այդ ազդողորմ սիրտալուծ գառնութիւններուն առջեւ, ու ան պահ մը սգայ, որքայ կոծէ ու սարսույ, կորսուած հայ փշրանքները...
Օտար երկնակամարներու տակ լուս

նին ու աստղերու պաղ, սարսափ ճաճանչներուն ներքեւ կը գեղեցիկ ալք հէգ փշուրները, անհամբեր սպասումը ունենալով կենսատու սրբեւեւադին, բայց որքան երկար է այդ սեպ սեւ մալ գիշերը, այդ թանձր աղջամուղին մէջէն վերի ցաւազար, լուսնոտ պլպլոցները կը թաղուին, կը մարին այդ անվերջանալի գիշերին երկայնքին մէջ, ու անքան ունենալով սպասումէն յորձանձ : Թափուական հայ բեկորները կաթիլ, կաթիլ դուրս կը ծորացնեն արալայտին ուրանալու անօքուտ յայտն վերջապած կաթիլները : ու գիշերը կերկարի, կերկարի : Ո՞վ պիտի արդեօք ցոյց տայ հրաշագործի կարողութիւնը ժամանակ ստապարելու ու շոյող արալայտին հայ երկնակամարի արեւածագին, որը վերջապէս շատողունի այդ յի վերջնական սպասումէն տոտը...
Ան ալ անոնցմէ էր, տքորուած տառապողներէն : Ահաւոր հեղեղ գինջ ալ քած էր, անհետացուցած էր հայրենի առեւ՝ օճախէն, մորկանը էն փափուկ դպուանքներէն ու սիրականի երջանիկ ներկայութիւնն : Աճապարանքին մէջ աչրը գոց էր : երեւակալութիւնը դադրած էր ու ան պահ մը զգալէ ու դատելէ խոյս տուած՝ ակօճայ սկսած էր շարժել իր դեռ զօրանք քայլերը անձանթ

կազմակերպել այն ամեն ինչ կուզէք զայն ըրէք...

Թող պատանդին հոս բոլոր ազգապան վայրենիքը, բոլոր ազգաբաշարախօսութիւնները:

Եւ 1901 թուականը չէ միայն որ փաստեր կը ընդ մեզի հայրենասիր երեւոյցներ:

1902 թուականն ալ բնականօրո՞ւմ է անոնցմով Գիմենք յարողով անոր ալ:

Ֆիլիպէ Ժիրայր

Ե Գ Ի Պ Տ Ա Կ Ա Ն Ի Բ

—)o(—

ԴԵՊՅԵՐ ԵՒ ԴԻՄԱՍՏՈՒՆԵՐՆԵՐ

Մեկտը.—Ահաւասիկ ակազա Բեմի խմբագրատունը:

Անցող.—Շնորհակալ եմ, սա կայն նախքան ներս մտնելը սա նստողները ինձի ծանօթացնելից կը խնդրեմ:

Մ.—Սեղանին ձախ անկիւնը նստողը թերթին պաշտօնական խմբագրութեան մէջն է: Անմեղեանը, որը տասը անգամ ծխախոտի խանութէն խմբագրատուն վազելով արին քրտինքին մէջ մտած է:

Ա.—Շատ պարզ եւ բարի դէմք մը ունի:

Մ.—Այո՛, շատ լաւ քաղաքացի մը պիտի ըլլար եթէ խմբագիր եւ յեղափոխական չըլլար:

Ա.—Ընդհակառակ այդ երկու յատկութիւնները լաւ քաղաքացի մը բըլալու երաշխաւորութիւններ են:

Մ.—Ճիշդ է ձեր նկատողութիւնը, սակայն երկուքին մէջ ալ խառնե՛ր շատ չօրփազու թիւններ կ'ընէ կոր:

Ա.—Անոր քովը սեղանին մէջտեղը նստողը ո՞վ է:

Մ.—Ինքն ինքն էրկայացուցիչ խմբագիրն է: Կակազեան, տար ալ հոգին բերանը կու գայ օրը տասը անգամ պորտալէն խմբագրատուն վազելով:

Ա.—Ի՞նչ վայրագ նայուածք ունի:

Մ.—Այո՛, շատ բարկացու է, երէ՛հ հաւատը բռնէ հրապարակաւ մարդ ալ կը ձեռնէ ու կը հայտնէ:

Ա.—Այսինքն թերթի մէջ ըսել կուզե՞ք, այնպէս չէ՞:

Մ.—Այդ կայ ու կայ, ո՛չ, իմ ըսածս փողոցային հրապարակի մէջ է:

Ա.—Ի՞նչ կրտէք խմբագիր մը (1) իրեն թո՞ղ տայ փողոցի մէջ մարդ ձեռնելու եւ հայտնելու... կատակ մի՛ ընէք:

Մ.—Տակաւին այդ բան մը չէ, իր թերթով հասարակութեան բարոյականի դասեր տուող այդ պարսնը բողոքողնքն բող մը անհեղձ նստած է:

Ա.—Դուք այսօր ուխտեր էք որ ինձ հետ կատակ ընէք, ինչպէս կատակը մէկ կողմ թողէք:

Մ.—Հաւատացէ՛ր, որ ըսածս կատակ չէ, այլ ամենուր գիտցած իրողութիւնն է: մասնաւոր, աւելի զարմանալին կայ, իր այդ հոմարտահին յոյն կին մը ըլլալուն, անոր յունական քթին շատ հաւնեք են բոլոր խմբագիրները եւ իրենց այս համակրութեանը մէջ այնքան յառաջ քայտեր են, որ սկսած են թերթին մէջ հայկական մեծ քթերը անարգելու...:

Ա.—Գուցէ այդ ճաշակի խնդիր է:

Մ.—Ո՛չ, հայ մը երբէք իր ազգային մէկ յատկութիւնը, մասնաւոր ֆիլիքսական անփոփոխելի մէկ յատկութիւնը ծաղրելու իրաւունք չունի:

Ա.—Կերեւայ թէ Եղիպտոսի հայ հասարակութեան ակառնները խուլ եւ աչքերը կոյր են...:

Մ.—Ձեմ կարծեք:

Ա.—Հասարակութեան կը ձգեն, որ այսպիսի մարդիկ աստիճաններ իրենց, ինչպէս իրենց ձեռքերը անոնց ձեռքին մէջ կը դնեն...:

Մ.—Մի՛ յուզուիք անցնինք միասնորոշ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ի Բ Ի Ա

Դրութիւնը Հայաստանի մէջ

Կ. Պոլսէն 26 օգոստոս թուականով կը հեռագրեն Ն. Ֆ. Պ. ին

—«Հայոց պատրիարք Օրմանեանը երեկ Սրբաբերդի մէջ բողոք տուեց այն բանի համար թէ՛ վերջին ժամանակներս խաղաղ պարոզ հայերու վիճակը շատ ծանրացած է: Պատրիարքը շարունակեց թէ՛ ասիական գաւառներու մէջ ճնշումը կը շարունակուի, մինչդեռ այստեղ ձեր բազմութիւններ եւ նմանօրինակ բնութիւններ կը կատարուին:

Կ Ի Է Տ Է

«Թանախի մէջ հետեւեալը կը կարդանք:

—Ամբողջ կրեաէի մէջ մեծ ցոյց մը տեղի ունէցաւ կղզին Յունաստանին միացնելու ի նըպատ:

Չորսէն հինգ հազար հոգի եւ կեր հաւաքուեք էին կանտիա՝ Գեորգ իշխանի ամառանային վիլլայի առաջ: Գնացքը, որ կ'առաջնորդուէր յունական դրօշակով շատ ազդու էր, եւ անդադար չկեցցէ միացումը՝ ազազակներ կը լսուէին:

Ասկէ յետոյ այցելած են իրաքանչիւր հիպատոսարան եւ հազարաւորութիւններ ձգած, որու մէջ կ'աղերսեն պետութիւնները չ'ընդդիմանալ միացման:

Շ Կ Է Յ Մ Ա Ր Ի Ա

Կր հազարդ են թէ՛ քսան ուսուսիտալացի անիշխանականներ են արտաքսուած ժընդիւն, Պերնէն եւ Յիւրիսէն:

Ռ Ո Ւ Օ — Ճ Ա Ր Ն Ա Կ Ա Ն Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ

Ռուս հրատանուսարներու պաշտօնական տեղեկագրից

Պետերսբուրգ, 27 օգոստոս, կուրպատկիւնէն կայսեր զրկած հեռագիր մը կը տեղեկացնէ՝

—«Ամսին 25ին ճարտարագիտ

միայն արեւելիսն ջոկատի վրայ յարձակումն սկսեցին: Անոն ուժը կը հասնէր երկու հետեւակ տիվիզիոնի՝ ուժեղ լինելով թափափուկ գնտով: Երկու բանակներն ալ գիշերը պատերազմի դաշտի վրայ անցուցին: Հեռաւորութիւնը երկու բանակներու մէջ երեքէն հինգ քիլոմէթր է: Երեկ մեր կորուստները կը հասնին 100 սպան: Կուսակալը վերաւորածի: Բացի պղտիկ ընդհարումներէ գիշերը խաղաղ անցաւ: Պէյսօր լուսաբացին ճարտարագիտ սկսան իրենց յարձակումը ամբողջ ճակատի վրայ:»

—Պետերսբուրգ, 27 օգոստոս Գեներալ-Լեյտենանդ Չախարովի պատերազմական խորհուրդին տուած հեռագիրը կը ծանուցանէ՝

—«Ես առաւօտ կանուխ «Սրբանամի» սկսաւ իր յարձակումը Մանլուրիական ամրոյց բանակի ճակատի վրայ: Ճարտարագիտ մեր նախափաշտերը ետ մղելով տիրեցին իրենց ձախ լծելի վրայ գտնուած երկաթուղային գծին: Այս գծի վրայ կէս օրին թշնամու յարձակումը դադարեցաւ: Գեոլուսը չը բացուած թշնամին կեդրոնացու մեր ձախ լծելի դէմ օտարապէս մէկ ու կէս տիվիզիոն քանակութեամբ լծող անօթներով միասին, եւ այս ուժի առաջ մեր նախափաշտերը ստիպուած եղան իրենց գլխաւոր դիրքերը ետ քաշուիլ: Եստեղ թշնամու յարձակումը կուս բնաւորութիւն չէր կրեր: Մեր հարաւային ճակատի վրայ ունեցած կորուստը 50 հոգու կը հասնի: Առաւօտեան ժամը 5 ու կէսին սկսաւ թշնամու լծըն: Կանոթաձգութիւնը հարաւարեւելեան ուղղութեամբ:

Ժամը 6ի մօտ կախը տաքցաւ եւ թշնամու հետեւակ զօրաբաժինը յարձակում գործեց մեր դիրքի ալ կողմի վրայ, աւերոյց հարաւարեւելեան ճակատի ուղղութեամբ: Ճարտարական գնտերու երկու յարձակումներն ալ մեր ալ լծելի վրայ, առաւօտեան ժամը 7ի մօտ ետ մղուեցաւ: Ժամը 7ին կէս օրէն վերջ չ'ընարուեցաւ թըշնամու յարձակումը Կոֆինցայի վրայ մեծ զօրութեամբ: Թշնամու բոլոր յարձակումները ետ մղուեցան: Մեր կորուստը կը հասնի 300 հոգու:

Հուսարացին դէմ արեւելեան կողմը ճարտարագիտ բուրգ ձեր կարողութեամբ սկսան յարձակիլ մեր ալ լծելի վրայ: Մեր զօրագնտերը առաջացած դիրքերէն ետ քաշուեցան կրկին գլխաւոր դիրքերուն վրայ: Արեւելեան կողմը մղուած կախը շատ լուրջ էր: Կախը հասաւ մինչեւ սուին ներու: Մենք կորուցուցինք 1000 մարդ, եւ այլեւս ժամանակ չունէինք ուրիշ կորուստներ ճշտել, եւ կուրի վախճանի մասին տեղե.

կութիւններ ստանալ: Սկսած կէս օրէն բաւականին խիստ կ'անձրեւէ Լիւստեանկի մէջ եւ շրջակաները: Չ'ընք կը բարձրանան:

Ճարտարական պատերազմական ուժը Փոքր-Արթուրի ստաբ

Թօքթուէն «Պէրլին» թակապետութիւնը կը հեռագրեն՝

—«Պարտ լքութեան համար օգնութեան համար ճարտարական զօրաբանակները ճարտարական հոն ուղղակի կը զրկուին: Խխան Փուշիմին, ճարտարական առջին տիվիզիոնի հրամանատարը, որ շատ մեծ մասնակցութիւն ունեցաւ Պորտ Արթուրի վերջին կարիւններուն, սպարապետ անուանուելով ետ է կանուած եւ իր տեղը յաջորդած է գեներալ Լեյտենանդ Մոլոֆու մարտի: Մարշալ Եամակաթան գեո միշտ այստեղ է, Ասոր պատերազմի վայրը երկաթուղի անկարելի է, որովհետեւ Միքայիլ միակ զինուորական գործերու զեկուցողն է, եւ մասնաւոր հասակը այլեւս չի կարող պատերազմի նեղութիւնները տանիլ: Ճարտարագիտներու Պորտ Արթուրի առաջ ունեցած կորուստները մինչեւ այժմ 12,000 մարդու կը հասնին, թիւ մը, որու մասին արդէն ճարտարագիտ պատրաստուած էին, եւ սա հասարակ շատ մեծ շնն գտնար: Գիտեն նոյնպէս թէ՛ կուրը կրկնուելու պահին լծելու այնքան հոգի նորէն վրտանգուին, որովհետեւ սխալ էր թէ՛ Պորտ Արթուրի մէջ ոտսական զօրաբանակը 28,000 հոգի էր բաղկացած, այլ, 36,000, որու մէջ վեցերորդականը միայն ծայրայեղ պարագային կուրին չը մասնակցիր:

(Ն. Ֆ. Պ.)

ՆՕԹԱՅՈՒ ՔԱՆԱԶԱՅՆ ԵՐԳԵՐ (Վիւսիպ)

Ֆիլիպէի Երգեցիկ-Թատր խումբը իր ունեցած պատրաստի երգերուն վրայ աւելցուցած է նորը:

Գիտեք շատ աժան, Ամեն տեղի երգեցիկ խումբի անդամներու համար մէկ երեսը 5 սանթիմ: Ուրիշ գնորդներու համար երեսը 10 սանթիմ: Ճամբու ծախքը գնորդներուն վրայ:

Վարչութիւն Ֆիլիպէի Երգ-Թատր Երկսեռ խումբ (Կնիխ)

Հասցէ՝ Mr. Ervant Aladjajian Philippopolie (Bulgarie)

Ա Չ Դ

Բարկէն-Սիւնի ընթերցարանին յարչութիւնը կը յայտարարէ թէ ընթերցարանին հասցէին նամակ զրկողները անպատճառ Բարկէն-Սիւնի անունը գրեն, որպէսզի հասցէներու մէջ չ'փոթուի ինչ պատճառով:

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатница «Взаимность» Варна